“ԹՈՂ ՏՈՒՔՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Ը. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1879 ԹԻՒ 8

ՄԱՅԱՌՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՈՐԵՆԻ ԿԸ ՔԱՂԷԻՆ

ՄԱՐԻԱՄ ԵՒ ՇՈՒՇԱՆ

Օր մը կանուխ Մարիամ և Շուշան գացին մորենի քաղել։ Անոնց տունեռուն մօտ մորենւոյ թուփեր շատ կային, ուստի և այս աղջկունք այն թուփերուն պտուղները քաղելով ետ-ռոպացւոց կը ծախէին։ Եւ որովհետև անոնց հայրը հաճուքիւն տուած էր անոնց իրենց համար պահել ինչ ըստակ որ շահէին այս գործէն, Մարիամ և Շուշան այն ստակով կը գընէին ինչ որ կ'ուզէին։

Անգամ մը երբ մացառներուն մէջ մորենի կը քաղէին, Մարիամ ծոցէն կտրոց (ՀԷԷ) մը հանելով կտրեց ճիւղ մը որմէ բռնուած էր անոր հանդերձին ծայրը։ Շուշան տեսնելով կտրոցը հարցուց Մարիամու, “Ո՞ր գտար այս կտրոցը, ես ալ կ'ուզեմ այսպիսի կտրոց մը ունենալ, բայց հայրս ստակ չի տար որ գնեմ։”

“Ես,” ըսաւ Մարիամ, “այս կտրոցը երեք դահեկանի գնեցի. շատ գեղեցիկ է, բայց իմ գործս կը տեսնէ, և ես իմ ստակովս գնած եմ զայն, այսինքն այն ստակէն զոր մորենի ծախելով շահած եմ։”

“Ես մորենի ծախելով շատ քիչ ստակ կը շահիմ,” ըսաւ Շուշան, “այն ստակն հազիւ պտղոյ և շաքարի կը բաւէ։ Հօրս պիտի ըսէի որ ինծի ըստակ տար կտրոցի համար, բայց հայրը քառասուն փարայէ աւելի չի տար։”

“Եթէ ես ալ ստակս քեզի պէս պտղոյ և շաքարի տայի, քովս բան չէր մնար. նայէ, այն ստակով զոր այսօր պիտի շահիմ, զոյգ մը թենոցի կոճակ պիտի գնեմ։ Եթէ դուն ալ ստակդ ուտելիքի չես տար, բաւական ստակ կ'ունենաս հարկաւոր բաներ գնելու, և կամ աղքատի տալու։”

“Բայց ստակը զոր ես նարնջի և շաքարի համար կու տամ,” ըսաւ Շուշան, “շատ քիչ է. ձեռքս շատ ստակ չանցներ որ . . . .։”

“Իմ խօսքս ալ այս է,” ըսաւ Մարիամ. “քովդ ստակ չի մնար, վասն զի քիչ քիչ պտղոյ կամ շաքարի համար կու տաս. եթէ իմ խրատս մտիկ ընելով ստակդ պահես, և հարկաւոր բաներու համար միայն տաս, այն ըստակն աւելի օգտակար պիտի ըլլայ քեզի։ Մայրս միշտ կ'ըսէ թէ հարկաւորը քան զզուարճալին լաւագոյն է։ Եթէ կամիս, դուն ալ այս խրատը պահէ։”

Մարիամու այս խրատն արդարև ոչ միայն տղայոց, այլև չափահասներէ շատերուն օգտակար է։

ՄԱՐԳԱՐԻՏԻՆ ԽՕՍՔԸ

Մարգարիտ հինգ տարեկան էր, և ծանր հիւանդութենէ մը նոր ելած ըլլալով, դեռ տկար էր և կը պառկէր անկողինը։ Այնպէս նիհար էր Մարգարիտ որ մայրը տարակոյս ունէր անոր ապրելուն։

Օր մը Մարգարտին մայրն անոր անկողնին քովի պատուհանը բացաւ որ տկար աղջիկն օդ առնուր և ուրախանար։ Որովհետև գարուն էր, ծառեր և թուփեր նոր ծաղկած էին կանանչ տերևներով, ծաղիկները բացուած էին երփն երփն գոյներով, թռչունք առ խնդութեան կ'երգէին քաղցրաձայն, և շատ ախորժելի հով մը կը փչէր մեղմով։

Մարգարիտ շատ ուրախացաւ թռչնոց դայլայլիկը լսելով, և մայրը տեսնելով աղջկան ուրախութիւնը, հարցուց անոր, «Թռչունք ի՞նչ կ'ըսեն, Մարգարիտ։»

«Թռչունք, 'Տէրը հովիւս է,' կ'ըսեն,» պատասխանեց Մարգարիտ։

Մարգարտին այս խօսքը մեծապէս ազդեց սրտառուչ մօրը, և առիթ եղաւ Աստուծոյ սէրը յիշեցնելու անոր։ Մարգարիտ կատարեալ առողջութիւն գտնելէն ետքն ալ այն խօսքին ազդեցութիւնը մնաց մօրը սրտին մէջ։

Սիրելի տղայք, կրնա՞ք բերնուց երգել այն սաղմոսը որոյ սկիզբն է, «Տէրը հովիւս է։» Մարգարիտ որ այս խօսքերը շատ կը սիրէր՝ կարծեց թէ նաև Թռչունք նոյնը կ'ըսէին երգելով։ Եթէ դուք ալ Մարգարտին հաւատքն ունիք, այս խօսքերն յեղյեղելով կրնաք փատահիլ թէ ամենեին ձնաս պիտի չտեսնէք, վասն զի Աստուած իւր դառնուկներուն ամէն կարօտութիւնը կը տեսնէ և կը պաշտպանէ զանոնք։

Եթէ հարցունէք թէ ի՞նչ կերպով կրնաք Աստուծոյ դառնուկներն ըլլալ, կը պատասխանեմ թէ Տէրը ձեզ գնած է իւր արեամբ, և ինչպէս միշտ կը սիրէր զձեզ, հիմա ևս նոյնպէս կը սիրէ։ Եթէ կը հաւատաք թէ Յիսուս ձեր մեղաց քաւութեան համար յանձն առաւ խաչին վրայ մեռնիլ, և սիրով կը յանձնէք անոր ձեր սիրտերը, դուք Յիսուսի դառնուկները կ'ըլլաք, և Յիսուս՝ ձեր Հովիւը։

Աստուծոյ Սուրբ Հոգին կրնայ սորվեցնել ձեզի սիրել զՅիսուս, և Աստուած խոստացած է բոլոր խնդրողներուն տալ իւր Սուրբ Հոգին։

ԳԻՐՔԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՊԱՏՈՒՏԵԼՈՎ ՆԵՏԵՑ

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Պետրոս գեղեցիկ գիրք մը ունէր։ Այս գիրքին ամէն էջին վրայ մէկ կամ երկու պատկերք կային որ շատ հաճոյ և զուարճալի էին տղայոց։

Օր մը Պետրոսին եղբայրը Խաչիկ դասը քաջ սորվելուն համար գովուեցաւ վարժապետէն, իսկ Պետրոս դասը չգիտնալուն համար յանդիմանութիւն լսեց։ Պետրոս շատ վշտացաւ այս բանին համար, և մինչ դպրոցէն դուրս կ'ելլէին, առիթ կը փնտռէր զԽաչիկ ծեծելու, բայց Խաչիկ փախաւ գնաց տուն։

Պետրոս որ հօրմէն կը վախնար՝ տունը բան մը չկրցաւ ընել Խաչիկին, և հետևեալ օրուան պահեց իր ոխը, բայց և այնպէս սրտին դառնութիւնը կը տեսնուէր երեսէն։

Երբ Պետրոս տուն եկաւ, տեսաւ որ Խաչիկ անոր գեղեցիկ պատկերազարդ գիրքն առած էր, և բազմոցին վրայ նստած կը նայէր պատկերներուն։

Պետրոս այս տեսնելով առաւել ևս բարկացաւ, և, «Զա՛ր տղայ, թո՛ղ գիրքս», ըսաւ անոր։

«Պատկերներուն կը նայիմ,» ըսաւ Խաչիկ, «գիրքիդ կո՞ղը կը բրդի։» «Իմն է գիրքը, մատիդ ծայրովն անգամ չեմ ուզեր որ անոր դպչիս,» ըսաւ Պետրոս բարկութեամբ։

Խաչիկ չուզեց գիրքը թողուլ, բայց Պետրոս քաշեց առաւ անոր ձեռքէն գիրքը, և ծուռ ծուռ նայելով Խաչիկին երեսն ի վեր, կայնեցաւ անոր դիմացը։

Խաչիկ տեսնելով Պետրոսի բարկութիւնը, սենեկէն դուրս ելաւ և պարտէզ գնաց, բայց մինչ դուրս կ'ելլէր սենեկէն, ըսաւ Պետրոսին, «Երբ դուն հոս չգտնուիս, կ'առնեմ գիրքը և պատկերներուն նայելով կը զուարճանամ։»

Այս խօսքին վրայ Պետրոս բոլորովին կատղելով, և չկրնալով բարկութիւնը զսպել, «Յնչ,» ըսաւ, «երբ ես հոս չգտնուիմ, գիրքը պիտի առնուս և պատկերներուն նայիս. տեսնենք պիտի կրնա՞ս ընել։» Այս ըսելով գիրքին պատկերները մի մի պատռելով նետեց դեռնը։

Տղայք, տեսէք այս բարկացոտ տղուն դէմքը, և զգուշացէք։ Պետրոս խաչիկէն վրէժ խնդրելու համար իր գիրքը պատռեց, և իրեն մեծ վնաս ըրաւ։

Բարկացոտ մարդը կոյր է. ոչ բաներն կը տեսնէ և ոչ օգտակարը։

ԵՐԿՈՒՈՐԵԱԿՔ

Գաղիացի աղքատ այրի մը ունէր երկու որդի որ երկուորեակ էին, բայց շատ տարբեր էին իրարմէ բարուք և արտաքին երեւութիւն։

Երէցը, Պերնարտ, երկայն և ուժեղ էր ի վեր քան զհասակ իւր, մարմնով վայելուչ և անձամբ շնորհալի. էր նաև հանճարեղ և փոյթ յուսումն։

Եդուարդ, ընդհակառակն, էր տըժգոյն և նիհար, և թէպէտ մտայ կողմանէ տկար չէր, չունէր սակայն եղբօրը գեղեցիկ իմացական յատկութիւնները։

Անօգնական այրին մեծ դժուարութեամբ կը սնուցանէր այս երկու տղայք, ըրս կը սիրէր կատարեալ մայրենի գթով։

Տղայոց հօրեղբայրներէն մին որ նոյն քաղքին մէջ վաճառական էր՝ օր մը ըսաւ անոնց մօրը.

«Քանի մը տարիէն պէտք պիտի ունենամ գրագրի մը, ուստի կ'ուզեմ զՊերնարտ դպրոց դնել։ Պերնարտ այնպէս փոյթ և սրամիտ է, որ երեք տարիէն կրնայ յարմար ըլլալ գործի մտնելու. և այնուհետև կրնայ օգնել քեզի և Եդուարդայ որ կը վախնամ թէ պիտի չկրնայ օգտակար ըլլալ իմիք։»

Այրին շատ ուրախ եղաւ տղոց հօրեղբօրն այս դիտաւորութեան վրայ, և Պերնարտ թողուց իւր մայրը և գնաց դպրոց, խոստանալով ամէն ջանք ընել իւր հօրեղբօր բաղձանաց համեմատ յառաջ երթալու։

Երբ Եդուարդ լսեց հօրեղբօրը խօսքը, տրտմութեամբ նստաւ սենեկին մէկ անկիւնը։

«Ինչո՞ւ համար այսպէս տրտում ես, որդեակ,» հարցուց մայրը։

«Բարէ՞, մայր,» ըսաւ Եդուարդ, «ես կարող պիտի չըլլամ օգտակար մարդ ըլլալ և օգնել քեզի որ այսչափ հոգ ունիս և կը տառապիս ինծի համար։»

Մայրը համբուրեց տղան, և մխիթարեց զնա ըստ կարի, բայց չկրցաւ Եդուարդայ տրտմութիւնը փարատել։

Հետևեալ առտուն Եդուարդ իր մօրը օգնելէն ետքը տանը գործերուն մէջ, գնաց ծեր պաշտօնակալի մը որ բաւական սէր կը ցուցնէր Եդուարդայ։

«Ցեր իմ,» ըսաւ անոր, «դուք սէր և խնամ կը ցուցնէք ինծի, և շատ բաներ գիտէք. կրնա՞ք ինծի բան մը սորվեցնել որ կարող ըլլամ օգտակար ըլլալ մօրս։» Ցետոյ պատմեց անոր թէ ինչպէս հօրեղբայրն իւր խնամոյ ներքեւ առած էր զՊէրնարտ։

Պաշտօնակալը որ շատ բան չէր կըրնար ընել Եդուարդայ, յանձն առաւ անոր Գաղիերէն քերականութիւն և թուաբանութիւն դաս տալ։ Ի սկզբան բաւական դժուարութիւն կրեց, քանզի Եդուարդ շատ սրամիտ չէր և ծանր կը սորվէր, բայց և այնպէս մեծ փափաք ունէր սորվելու և այնչափ փութով կ'աշխատէր, որ շուտ յառաջ գնաց։ Պաշտօնակալը հաճութեամբ տեսնելով անոր փոյթը և ջանքը, սկսաւ նաեւ աշխարհագրութիւն և պատմութիւն դաս տալ անոր. սորվեցուց նաև Անգղիերէն խօսիլ։

Պէրնարտի գալով, անոր սրամտութիւնը և հանճարը զարմացուց խկըզբան դպրոցին դասատուները, բայց որովհետև խաղալու չափազանց սէր ունէր, սկսաւ կամաց կամաց թուլնալ և չսորվիլ իր դասերը։ Երբ մայրը կը յանդիմանէր զնա իր դասերուն համար, Պէրնարտ միշտ կը պատասխանէր.

«Դեռ ժամանակ ունիմ, և պէտք չունիմ շատ աշխատելու. մինչև ուսման ընթացքին վերջը կը յուսամ ամէն հարկաւոր բան սորվիլ։»

Բայց այնպէս պատահեցաւ որ գրագիրը որուն տեղ պիտի անցնէր Պէրնարտ՝ հիւանդանալով, յառաջ քան աւարտելն իր գործին պայմանաժամը՝ մեռաւ։ Մինչ դեռ չորս ամիս կար դպրոցին երեքամեայ շրջանին, վաճառականը գնաց տեսնել իւր եղբօրորդին, յուսալով գտնել զնա պատրաստ կատարելու պաշտօնն առ որ սահմանած էր զնա. բայց տեսաւ որ Պէրնարտ դեռ շատ հեռ էր թուաբանութեան մէջ, անոր Գաղիերէնը ևս շատ տկար էր։ Անատեն վաճառականը նեղանալով գնաց անոր մօրը, և ըսաւ.

«Որդիդ իմ բաղձանացս համեմատ չվարուեցաւ։ Ինչ արուեստի որ կ'ուզես տուր զՊէրնարտ, ես ուրիշ գրագիր մը փնտռելու եմ։»

Անատեն Եդուարդ ըսաւ հօրեղբօրը. «Սիրելի հօրեղբայր, դպրոցին ուսման ընթացքին համեմատ տուր Պէրնատին չորս ամիս ևս ժամանակ, կը յուսամ թէ կորսուած ժամանակին պակասը պիտի լեցունէ Պէրնարտ։ Այս միջոցին, եթէ կը հաճիք ես գործեմ անոր տեղ։»

«Դո՞ն,» ըսաւ վաճառականը ծիծաղելով. «դուն գրիչ բռնել անգամ չես գիտեր.» այս ըսելով սկսաւ հարցումներ ընել Եդուարդայ։

Եդուարդ իւր հօրեղբօրը բոլոր հարցումներուն այնպէս քաջ պատասխանեց, որ հօրեղբայրը շատ գոհ ըլլալով անկէ, իսկոյն տարաւ զնա իրեն հետ, և թէպէտ Եդուարդ դեռ փոքր և տկար էր, դրաւ զնա իւր մեռնող գրագրին տեղ աղէկ ամսականով։ Այսպէս աղքատ այրին հանգիստ գըտաւ, քանզի Եդուարդ տան ամէն պիտոյքը կը հոգար։

Այս պատմութիւնը կը ցուցնէ թէ փոյթ և աշխատող տղան որչափ և տկար ըլլայ, յառաջ կ'երթայ, մինչ ծոյլն իր ընտիր յատկութիւններովը կը մնայ ճամբան։

ՎԻՐԱՒՈՐ ԾԱՌ ՄԸ

Մօտերս անտառէ մը անցնելով ծառ մը տեսայ որ ուշադրութիւնս բոլորովին գրաւեց։ Թերևս կը կարծէք թէ այս ծառը գեղեցիկ, բարձր և հաստաբմատ էր. ոչ, զիս զարմացնող ծառն այս յատկութիւնները չունէր։ Ունէր բաւական բարձրութիւն, բայց իր քունին վրայ, այնչափ ցած որ տըղայ մը անգամ կրնար հասնիլ, ի վաղուց բացուած մեծ վերքի մը նշանը կը կրէր։ Այս նշանը կը ցուցնէր թէ ծառն իր մատաղութեան ատենը սաստիկ հարուած մը առած էր։ Զեմ գիտեր թէ ինչ էր պատճառը որ այս ծառին բունն այսպէս խոց և խեղ մնացած էր, և ոստերը ծուռ և անձև էին։ Արդարև ծառին մեծամեծ ոստերուն վրայ կային կանանչ տերևներ, բայց վերքին խորութեանը համար, եթէ մօտակայ ծառք չպաշտպանէին զնա հովէ և մրրկէ, ծառը չկրնալով դիմանալ շատոնց դետին թաւալած էր։

Երբ այս ծառը տեսայ, միտքս եկան մոլի և չարաբարոյ տղայք։ Կան տղայք որ կը մեծնան գէշ մոլութիւններով, զրօրինակ, ստախօսութեամբ, գողութեամբ, հայհոյութեամբ, արբեցութեամբ, ծխախոտ գործածելով և ուրիշ ասոնց նման չար ունակութիւններով, և այսպէս մեծնալէն ետքը, թէպէտ կրնան միշտ աղատիլ անոնցմէ և ըլլալ բարի և առաքինի, բայց շատ դժուարաւ. և եթէ այն մոլութիւնները թողուն ևս, որովհետև այն չար ունակութիւններով տկարացած է անոնց կամքը, փորձութենէ դիւրաւ կը յաղթուին և նորէն այն մոլութեանց մէջ կ'ելնան։

Ցղայք, զայս գիտնալով, այնպիսի մոլութեանց տեղի մի տաք, ապա թէ ոչ, ինչպէս որ այն ծառին վրայ մատաղութենէ առնուած վերքը միշտ մնայ, նոյնպէս ձեր վրայ մոլութեանց նշանը կը մնայ մինչև ցծերութիւն։

ՄԵՂՈՒԱՔԱՂ

Մեղուաքաղ կոչուած թռչունն աշխարհիս ամէն կողմը կը գտնուի։ Այս թռչունն աւելի քան չորս հարիւր տե-

սակ է։ Հարաւային Ամերիկա այս թռչունները ոմանք են կարմիր բոցագոյն, և երբ արագ կը թռչին՝ կրակի բոցի պէս կ'երևան. այլք ևս մոխրագոյն են։ Խաղաղական ովկիանոսի կղզիներուն մէջ այս թռչունը ձեան պէս ըսպիտակ է։ Մեծամեծ անտառներու մէջ կը տեսնուին նաև մեղուաքաղը ի գոյն շագանակի, և ասոնք ծաղկանց գլուխները չեն ծծեր, այլ միշտ ծառերուն հովանւոյն տակ մնալով փոքրիկ ճանճեր կ'որսան։ Այս թռչնոց ուրիշ տեսակները ոսկեգոյն է. ուրիշ մէկ տեսակը՝ կապոյտ կամ կանանչ և կամ բազմագունի կամ պիսակ բայց ադամանդի պէս կը փայլի։

Սպանիացիք այս թռչուններուն մէկ տեսակը կը կոչեն «Ծաղկահամբոյր,» Անգլիացիք ուրիշ մէկ տեսակին «Թագաւոր արեգական» անունը կուտան։ Մեղուաքաղը շատ արագ կը թռչի, և այս պատճառաւ աղատ է ուրիշ թռչնոց ազդեցութենէն, և շատ քաջասիրտ ըլլալով՝ իր բունին մօտեցող ամէն թռչնոց վրայ յարձակելով կը փախցունէ զնա։

ՄԵՂՈՒԱՔԱՂԻՆ ԲՈՅՆԸ

Մեղուաքաղին բոյնը շատ փափուկ է, ընկուզի մը չափ հաղիւ կայ, և ծառերուն ոստերուն մէջ կամ տերևի մը տակ փակած կը գտնուի։ Այս բոյներուն ամէնքը միակերպ չեն, այլ ինչպէս որ թռչնոյն տեսակները չորս հարիւր են, նոյնպէս բոյներուն տեսակները պակաս չեն քան զչորս հարիւր։

Մեղուաքաղը ծաղկանց հիւթն իբրև մեղր կը ծծէ, միանգամայն մանր մանր ճանճեր և ճճիներ կ'որսայ։

Նախընթաց պատկերին մէջ տեսնուած մեղուաքաղ թռչնոյ մին «մկրատագի,» և միւսը՝ «սուսերակտուց» կոչուած տեսակէն է։

ՎԱՐԴՈՒՀԻՈՅՆ ՍՏԱԿԸ

Փոքրիկ Վարդուհի, երբ չորս տարին կատարելով հինգը մտաւ, հօրեղբայրն այցելութեան գալով անոր ծննդեան օրը, փոքր ոսկի դրամ մը ընծայեց անոր։ Մինչ Վարդուհւոյն հայրը եւ մայրն իրենց հիւր աղդականերն հետ կը խօսէին սեղանին վրայ, Վարդուհի ոսկի դրամը ձեռքը փողոց ելաւ։ Այն միջոցին գլխուն վրայ կոզով մը լեցուն պտղով կին մը կ'անցնէր փողոցէն։

Փոքրիկ Վարդուհի ոսկի դրամը ցուցնելով պտղավաճառ կնոջ, ըսաւ. «Ցես, ի՞նչ գեղեցիկ է այս ոսկին. հօրեղբայրս ինծի ընծայ ըրաւ զայն։»

«Այո,» ըսաւ պտղավաճառը. «այդ ոսկին գեղեցիկ է, բայց ես քան զայն գեղեցիկ խնձոր մը ունիմ կոզովիս մէջ։ Եթէ այդ ոսկին ինծի կուտաս, այն գեղեցիկ խնձորը կուտամ քեզի։» Այս ըսելով պտղավաճառ կինը ցուցուց խնձորը Վարդուհւոյն։ Զղջան խլկոյն ոսկին տուաւ և առաւ խնձորը, և ուրախութեամբ ոստոստելով եկաւ տուն։ «Ցես, մայր,» ըսաւ մօրը, «փոքրիկ գեղին ոսկիս տուի, և այս կարմրուկ սիրուն խնձորիկն առի։»

Պտղավաճառ կինը ոսկին առնելով անհերևոյթ եղած էր։ Վարդուհւոյն ծնողքը շատ նեղացան որ առանց հրամանի ոսկին տուած և այն խնձորն առած էր Վարդուհի. բայց հօրեղբայրն ըսաւ. «Ո՞րչափ մարդիկ այս տղուն պէս երկնային դանձեր կուտան աշխարհիս ունայն հաճոյից։»

Վարդուհւոյն հօրեղբայրը հարուստ խանութպան էր։ Այն իրիկուն ձեռքը պարապ կոզովով պտղավաճառ կին մը եկաւ անոր խանութը, և ուզելով քիչ մը սուրճ և շաքար գնել, ոսկի մը տուաւ անոր փոխելու։ Վարդուհւոյն հօրեղբայրը ուշադրութեամբ նայելէն ետքը ոսկի դրամին, ըսաւ կնոջը. «Այս ոսկին քու ձեռքդ ի՞նչպէս անցաւ։ Այս տեսակ ոսկի հաղիւ կը գտնուի։ Ես թէ՛ այս ոսկին և թէ՛ քեզ կը ճանչնամ։ Փոքրիկ տղայոց խնձոր տալով անոնց ձեռքէն ոսկիներ առնելն հիմա քեզի կը սորվեցնեմ։» Այս ըսելէն ետքը կինը բռնեց, և մարդ ղրկելով ոստիկանութեան ղինւոր մը կանչեց։ Կինը բանտարկուեցաւ, և քանի մը շաբաթ բանտը պառկելէն ետքը, ոստիկանութիւնը հրապարակի մէջ կեցուց զանի, վիզէն թուղթ մը կախելով որոյ վերայ գրուած էր այսպէս. «Գողն իր գողութեան պատիժը պէտք է որ ընդունի։»

ԳՈՂ ԽԵՑԳԵՏԻ

Կան տաք երկիրներ ուր «գող խեցգետի» կոչուած տեսակ մը խեցգետի կայ։ Այս անասունը ծովուն մէջ կ'ապրի, բայց իր կերակուրը ցամաքի վրայ կը պատրաստէ. և որովհետև շատ կը սիրէ հնդիկ ընկոյզը, այս ընկուզէն ժողվելու համար ընկուզի ծառերուն մինչև գագաթը կ'ելլէ։ Երբ հասուն ընկոյզ մը կը գտնէ, իսկոյն փրցնելով գետինը կը նետէ զայն, և ապա ծառէն իջնելով, ընկուզին արտաքին կեղևը որ խծուծի նման է՝ կը պատռէ, և ներքին կարծր կեղևը մեծ դժուարութեամբ կոտրելով կ'ուտէ մէջի պտուղը։

Այս խեցգետին յուլիսի մէջ գետինը մարդու գլխոյ չափ ծակ մը կը բանայ, և ծակին մէջ մտնելէն ետքը, հողը ղոր դուրս պեղած էր՝ ներս քաշելով, ծակը կը գոցէ, և իբր երեք ամիս թմրած կը մնայ հոն։ Խեցգետին յառաջ քան ելլելն այն ծակէն, իր մարմնոյն պատեանը մերկանալով, աւելի մեծ պատեան մը կը կապէ։

Օր մը այս գող խեցգետիներէն մին արկղի մը մէջ փակելով, արկղը գամեցի, և վրան ծանր փայտ մը դրի։ Խեցգետին հոն երկու օր և երկու գիշեր մնաց, և երրորդ գիշերը բանալով արկղին բերանը՝ փախաւ։

Անգամ մը նաև մը որ տակէն ջուր առնուլ սկսած էր՝ ցամաքը հանուեցաւ չմնուելու համար, և տեսնուեցաւ որ նաւին ջուր առնելուն պատճառը գող խեցգետին էր։ Այս անասունը վաճառաց հետ մէկտեղ դրուած ըլլալով նաւին համբարանոցը, աղաուելու համար նաւին յատակը սկսած էր ծակել։

Օր մը Շուշանիկ, երբ անկողնէն կ'ելլէր, առաջադրեց այն օրն աղէկ անցունել, ուրիշի հետ կռիւ չընել, և ծանր խօսք չըսել։ Բայց երբ եղբայրը Յովհանիկ անոր հանդերձին վրայ սուրճ թափեց, Շուշանիկ մոռնալով առաջադրութիւնը՝ բարկութեամբ ըսաւ եղբօրը. «Անառա՛կ և անմիտ տղայ։» Յովհանիկ ևս բարկանալով անոր ծանր խօսքեր ըսաւ, և այնուհետև բոլոր օրը դէշ գնաց, վասն զի բարկութեամբ սկսուած օրը մարդուն գործը յաջող չերթար։

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր Հ. Գ. ԿՐԻՆ
Ֆիլատելֆիայի եկեղեցու, Ամերիկան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈԲ ՊՈՅՃԱՃԵԱՆ